<<ԵՐԵՎԱՆԻ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N135
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ
ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Հեքիաթի և առակի ուսուցման յուրահատկությունները»
Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն
Ուսուցիչ՝ Երևանի Լ. Արիսյանի անվան թ.127 ավագ դպրոց
Սարգսյան Աստղիկ Լիպարիտի
Վերապատրաստող՝ Ա. Սողոմոնյան

ԵՐԵՎԱՆ-2023

Բովանդակություն

Ներածություն 3
Հետազոտական համատեքստ 4
Գործնական համատեքստ..... 5
Հետազոտության ընթացք 7
Տվյալների մշակում և վերլուծություն……..... 11
Ամփոփում 13
Օգտագործված գրականության ցանկ 14

Ներածություն

Թեմայի արդիականությունը:

Մայրենիի ընթերցարաններում զետեղված նյութերը բովանդակությամբ ու ձևով, հետապնդած կրթական ու դաստիարակչական խնդիրներով խիստ բազմազան են: Սակայն եթե դրանք խմբավորելու լինենք ըստ բնույթի, ապա հիմնականում կստացվեն երկու տիպի նյութեր՝ գեղարվեստական և գործնական կամ գիտահանրամատչելի: Դրանք ոչ միայն իրենց ձևով ու խնդիրներով, այլև ավանդման մեթոդական առանձնահատկություններով տարբերվում են միմյանցից:

Առհասարակ պետք է նկատի ունենալ, որ հասարակական գիտակցության բոլոր ձևերն էլ բխում են իրականությունից,որովհետև վերջին հաշվով բոլորի բովանդակությունն էլ իրական կյանքն է իր բազմապիսի ձևերով: Սակայն հասարակական գիտության այդ տարբեր ձևերն իրենց բովանդակությամբ, ձևով և հետապնդած նպատակներով անպայման ինչ-որ չափով տարբերվում են միմյանցից: Գեղարվեստական երկերում կյանքն արտացոլվում է ոչ թե թվերի, գիտական բնորոշումների ու ընդհանրացումների, ոչ թե օրենքների ու փաստերի,այլ պատկերների, մարդկային կերպարների, գործող անձերի, դրանց խոհերի ու զգացմունքների ցուցադրման միջոցով:

Հետազոտության նպատակը:

Մայրենի լեզվի ընթերցարաններում տեղ գտած գեղարվեստական նյութերի հիմնական նպատակը երեխաների դաստիարակությունն է, գեղագիտական ճաշակի զարգացումը, գրական հայերենի ուսուցումը, և, իհարկե, նաև որոշ գիտելիքների ու ճանաչողական տեղեկությունների հաղորդումը: Ըստ այդմ էլ այս տիպի նյութերի ավանդման ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձնել դրանց հուզական կողմի ճիշտ ու խորը ընկալմանը:

Հետազոտական համատեքստ

Գրականության մեջ կյանքի ընդգրկման հնարավորությունները շատ մեծ են, որովհետև չկան, կամ, ավելի ճիշտ, շատ քիչ են մարդկային զգացմունքների, հուզերի ու ապրումների, մարդկային խոհերի, մտորումների ու փոխհարաբերությունների այն բնագավառները, որոնք հնարավոր չէ խոսքի միջոցով պատկերել:

Գեղարվեստական գրականության մեջ հրաշքներ գործող խոսքը ուսուցողական տեսակետից բացառիկ կարևոր ու անփոխարինել իարժեք է ներկայացնում, ուստի և այս տիպի նյութերի վրա տարվող աշխատանքների մեջ լեզվական աշխատանքը հիմնական տեղ է գրավում: Ինչպես գրական հայերենի օրինակ տալու, այնպես էլ պատկերավոր խոսքի ուսուցման ու բառապաշարի հարստացման տեսակետից գեղարվեստական նյութերը ուսուցողական շատ մեծ հնարավորություններ ունեն, որոնք ուսուցիչը պետք է կարողանա տեղին ու ճիշտ օգտագործել:

Ուսումնասիրվող նյութի լեզվի վրա տարվող աշխատանքն սկսվում է դեռևս նախապատրաստական զրույցից և շարունակվում մինչև ամփոփումը: Աշակերտները սովորում են բնագրի բառերն ու բառակապակցությունները ճիշտ կադալ, դրանց իմաստը հասկանալ ու բացատրել, դրանց հոմանիշներն ու հականիշները գտնել, խոսքի մեջ դրանք տեղին ու ճիշտ օգտագործել, դրանցով նոր բառեր ու բառակա-պակցություններ կազմել և այլն[1]:

Ինչպես հայտնի է, գեղարվեստական գրականությունը հասարակության համար նաև հսկայական ճանաչողական արժեք ունի, որովհետև ընթերցողները գրական երկերից ոչ միայն գեղարվեստական հաճույք են ստանում, հաղորդակից են դառնում գրական բարձրարժեք խոսքին ու պատկերավոր մտածողությանը, այլև դրանց միջոցով ճանաչում են այս կամ այն հասարակարգը, ժամանակաշրջանը կամ հասարակական հարաբերությունները:

[1] Ա. Ե, Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Ե., 1980թ., էջ 190

Գործնական համատեքստ

Հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին ու ամենատարածված ստեղծագործություններից են, դրանք ծագել են մարդկության մանկության շրջանում, սակայն այսօր էլ շարունակում են ստեղծվել ու հուզել ընթերցողներին իրենց անմիջականությամբ, պարզությամբ ու խոր լավատեսությամբ: Հեքիաթները լինում են երեք տեսակ՝ կենդանական, հրաշապատում և իրապատում: Տարրական դասարաններում հանձնարարելի են համարվում կենդանական ու իրապատում հեքիաթները միայն, իսկ հրաշապատում հեքիաթները,որպես կանոն,այդ տարիքի երեխաներին խորհուրդ չի տրվում կարդալ:

Կենդանական հեքիաթները առաջացել են խոր հնադարում, թերևս այն ժամանակ, երբ մարդը նոր էր սկսում կենդանիներին ընտելացնել, դրա համար էլ այս հեքիաթներում գործող անձինք հիմնականում կենդանիներն են; Կենդանական հեքիաթներից հետագայում առաջացել են առակները, որոնցում նույնպես գործող անձինք մեծ մասում կենդանիներն են:

Իրապատում հեքիաթները ըստ թեմատիկայի լինում են կենցաղային, հերոսական,սոցիալական և այլն: Այս բոլորի հիմքն էլ մարդկային կյանքն է՝ իր բարդ ու բազմապիսի փոխհարաբերություններով:Երբեմն դրանցից շատերը շատ ավելի ճշմարտապատում ու իրական են, քան սովորական իրապատում հեքիաթները: Այսպիսի հեքիաթներում հեքիաթայինը ոչ այնքան փաստերն են՝ գործողություններն ու գործող անձինք, որքան գործողությունների կամ սյուժետային գծի լուծումները, որոնք,ինչպես հատուկ է հեքիաթներին,շատ պարզ ու դյուրին են, որպիսիք իրականության մեջ երբեք չեն լինում:

Մայրենի լեզվի ընթերցարաններում կան ոչ միայն ժողովրդական հեքիաթներ, այլև հեքիաթների գրական մշակումներ: Ժողովրդական հեքիաթների լավագույն մշակողներ են եղել Ղ. Աղայանը, Հովհ.Թումանյանը, Ստ. Լիսինցյանը, Ստ. Զորյանը, Մ. Կորյունը և ուրիշներ, որոնց մշակած գեղեցիկ հեքիաթները մեր դասագրքերի զարդերն են:

Առակը բարոյախոսական, երգիծական կամ ծաղրական բովանդակությամբ պատմողական բնույթի ոչ մեծ չափածո, իսկ երբեմն էլ արձակ գեղարվեստական ստեղծագործություն է: Առակներում նկարագրված են մարդկային բնավորության գծերը, մարդկանց արարքներն ու փոխհարաբերությունները, ծաղրված են մարդկանց

թերություններն ու բացերը, սակայն այդ բոլորը ներկայացված են այլաբանորեն, փոխաբերական ձևով՝ կենդանիների ու իրերի փոխհարաբերության միջոցով[2]:

Բայց առակներում նկարագրված կենդանիների ու իրերի փոխհարաբերության մեջ բավականաչափ թափանցիկ կերպով քննադատվում են մարդկային բնավորության զանազան վատ գծերը, հասարակության տարբեր խավերի փոխհարաբերությունները, վատն ու չարը: Առակներում յուրաքանչյուր կենդանի հանդես է գալիս իր այն վարքագծով,որով հայտնի է մարդուն նրա դարավոր կենսափորձից: Օրինակ՝ նապաստակը հանդես է գալիս որպես վախկոտության մարմնացում, աղվեսը՝ խորամանկության, գայլը՝ ագահության և այլն; Ուստի և հեշտությամբ հասկացվում է, թե հեղինակն ինչ է ցանկանում ասել այդ առակով՝ ում և ինչի համար է ծաղրում:

Առակը որպես գրական տեսակ ծագել է շատ վաղ ժամանակներում: Դեռևս անտիկ Հունաստանում հայտնի է եղել առակագիր Եզոպոսը, որի առակները լայն ճանաչում են գտել թե՛ հնում, թե՛ նոր ժամանակներում: Հայ բազմադարյան գրականության մեջ ևս վաղուց ի վեր հայտնի է առակի ժանրը: Դեռևս 12-13-րդ դարերից հայտնի են առակագիրներ Մխիթթա Գոշը, Վարդան Այգեկցին, որոնց առակները ոչ միայն հայերեն, այլև աշխարհի լեզուներով բազմաթիվ հրատարակություններ են ունեցել: Միջնադարյան հայ առակների մասին արեքավոր ուսումնասիրություն է կատարել նշանավոր հայագետ Ն. Մառը: Նոր ժամանակում իրենց առակներով հայտնի են Խ. Աբովյանը, Հ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Ա.Խնկոյանը:

[2] Е. А. Адамович,Обзяснительное чтение в начальной школе, М., 1955.

Հետազոտության ընթացք

Ինչպես Ուշինսկին է նկատել, հեքիաթներում առկա կյանքով ու հետաքրքրություններով լի անընդհատ շարժումը միահյուսվում է պատմելաձևի պարզության ու հաճախակի հանդիպող կրկնությունների հետ, ստեղծում մի ներդաշնակ ամբողջություն, որն իր բոլոր գեղեցիկ մանրամասնություններով, ժողովրդական բառերով, դարձվածքներով ու լեզվամտածողությամբ հեշտությամբ տպավորվում է երեխաների հիշողության մեջ:

Հեքիաթները ստեղծվել են մարդկային հասարակարգի մանկության շրջանում, երբ մարդն ի վիճակի չէր թափանցելու շրջապատի բնական ու հասարակական երևույթների էության մեջ, ըմբռնելու դրանց միջև եղած պատճառահետևանքային կապերը: Հենց դրա հետևանքով էլ հեքիաթները շատ պարզ, դյուրահաս ու հաճելի են երեխաների համար, նրանք ոչ միայն սիրով լսում կամ կարդում են դրանք, այլև կրկնակի ու եռակի անգամ վերընթերցում: Չկա մարդ, որ հեքիաթներ չսիրի կամ մանկության տարիներին դրանցով հրապուրված չլինի:

<<Հեքիաթը բարոյական և մտավոր զարգացման համար շատ և շատ նման է մայրական կաթին>>,-ասում էր Ղ. Աղայանը: Հենց դա է պատճառը, որ Ուշինսկին այնպես վստահորեն պնդում էր, թե ժողովրդական հեքիաթները պաշտոնական գրականության կողմից մանուկների համար գրված բոլոր տեսակի պատմվածքներից ավելի բարձր կարելի է դասել:

Հեքիաթում իրականն ու երևակայականը հանդես են գալիս միաձուլված ձևով, և դա նրա ժանրային հիմնական առանձնահատկություններից մեկն է: Դասավանդման ընթացքում հեքիաթի ուսումնասիրությունն այնպես պետք է տանել, որ դրանք՝ թե՛ իրենց փոխադարձ միասնության մեջ և թե՛ առանձին-առանձին, հասնեն երեխաների գիտակցությանը:

Հեքիաթի դասավանդման աշխատանքն ունի երկու հիմնական փուլ՝ բովանդակության կամ սյուժեի հաղորդում և հեքիաթային կամ երևակայական կողմի բացահայտում:

Սրանք երկուսն էլ խիստ կարևոր ու անհրաժեշտ են նյութի յուրացման ու նրանից բխող կրթական ու դաստիարակչական նպատակների իրականացման համար և երբեք չեն կարող փոխարինել միմյանց:

Տարրական դասարաններում հեքիաթը ամենից առաջ պետք է դասավանդել որպես գեղարվեստական ստեղծագործություն: Երբ հեքիաթի բնագիրը

բազմակողմանիորեն մշակված ու յուրացված կլինի, այն ժամանակ միայն կարելի է անցնել հեքիաթի երևակայական կողմի բացահայտմանը: Աշակերտների առաջ պետք է բաց անե; հեքիաթի հեքիաթային կողմը, ցույց տալ նրանում եղած իրականն ու անիրականը, ճշմարտապատումն ու երևակայականը, իհարկե, այդ ամենը կատարելով կոնկրետ նյութի վրա, պարզ ու մատչելի ձևով, որպեսզի երեխաները տեսական բացատրությունները կապեն գործնականի հետ, յուրաքանչյուր բառ ու հասկացություն իմաստավորեն կոնկրետ բովանդակությամբ: Այսպես, օրինակ՝ կարելի է աշակերտներին բացատրել,որ <<Աղջիկն ու արջը>> հեքիաթում սունկեր ու հատապտուղներ հավաքելու համար երեխաների անտառ գնալը, անտառում փոքրիկ Նունիկի մոլորվելը և արջի որջը ընկնելը միանգամայն հնարավոր ու իրական են, իսկ Նունիկի կողմից արջին հիմարեցնելու ամբողջ պատմությունը՝ մտացածին ու անիրական[3]:

Հեքիաթներում եղած իրականի ու անիրականի այս սահմանազծումն ու տարբերակումն զգալի դարձնելու համար հաճախ կարելի է նաև համապատասխան օրինակներ բերել արտադասարանային ընթերանության միջոցով աշակերտների կարդացած կամ նախորդ դասարաններում անցած հեքիաթներից: Երբ դրան երեխաները կվարժվեն,պետք է նաև պարզ բացատրություններ ու հիմնավորում տալ հեքիաթներում երևակայական կամ անիրական տարրի առկայության վերաբերյալ,որպեսզի նրանց համար պարզ լինի, թե ինչու է ժողովուրդն իր մտքերն ու ցանկություններն արտահայտելու համար դիմել այդ միջոցին: Օրինակ՝ <<Թռչող գորգը>> հեքիաթում ժողովուրդն իր խոհերն ու ցանկություններն ի կատար ածելու համար գտել է երևակայական այն ամենահեշտ, պարզ ու ամենահասարակ փոխադրական միջոցը, որը հնարավորություն կտա նրան, առանց որևէ դժվարության, հաղթահարելու բոլոր բնական արգելքները: Թռչող գորգ ունեցող ճանապարհորդի համար հաղթահարելի են անանցանելի անտառներն ու խոր-խոր ձորերը, ձյունածածկ,բարձրաբերձ լեռներն ու անծայրածիր դաշտերը,լայնահուն գետերն ու վտանգավոր ճահիճները, նա հեշտությամբ կարող է հաղթահարել բոլոր այդ արգելքները և իր նպատակին հասնել: Մեկ այլ հեքիաթում ժողովուրդը գտել է օտարության մեջ գտնվող հարազատին հեռվից հեռու լսելու կամ տեսնելու միջոցը և այլն: Ժամանակի ընթացքում, գիտության ու տեխնիկայի զարգացմանը զուգընթաց, մարդը, իհարկե, իրականացրել է իր այդ դարավոր երազանքները,սակայն հեքիաթ-ներում դրանք մնացել են հեքիաթային ու երևակայական թե՛ իրենց բնույթով և թե՝ իրենց ինքնատիպ լուծումներով:

[3] Ա. Ե. Տեր-Գրիգորյան, Ընթերցանության դասը տարրական դասարաններում, Ե.,1974թ.,

Հեքիաթի դասավանդումը պետք է ավարտվի նրա բարոյախոսական կամ դաստիարակչական եզրակացության բացահայտմամբ, որը այս տիպի նյութերի ուսումնասիրության աշխատանքի ամենահիմնական և առանձնահատուկ կողմերից մեկն է: Օրինակ՝ աշակերտները պետք է գիտակցեն, որ <<Աղվեսն ու այծը>> հեքիաթը սովորեցնում է, որ մարդը,որքան էլ նա փոքր ու անփորձ լինի, նույնիսկ ամենազորեղ ու փորձառու կենդանուց էլ խելոք ու հնարամիտ է և այլն:

Հեքիաթների դասավանդման ամենավերջին փուլն այն համապատասխան առածների, ասացվածքների ու հանելուկների հետ կապելն է: Եթե հեքիաթի բովանդակությունը երեխաների համար արդեն պարզ է, համապատասխան առածներ, ասացվածքներ ու հանելուկներ գտնելը և դրանք բացատրելն ու հեքիաթի հետ կապելը դժվար չէ և մեծապես նպաստում է ինչպես հեքիաթի բարոյախոսական կողմի ճիշտ ընկալմանը, այնպես էլ երեխաների վրա նրա ունենալիք ազդեցության ուժեղացմանը:

Հեքիաթների դասավանդման այս եղանակից բացի, գործադրման համար հանձնարարելի կարելի է համարել նաև պատմողական և հորինողական ձևերը, որոնք հեքիաթների ավանդման մեջ բազմազանություն ու հետաքրքրություն կմտցնեն:

Առակն իր ժանրային առանձնահատկություններով որոշ չափով նման է ինչպես պատմվածքին, այնպես էլ հեքիաթին: Եթե պատմվածքի նման առակը ևս սյուժե, ֆաբուլյա, գործող անձերի պայքար ու գաղափար ունի, ապա հեքիաթի պես նրա մեջ առկա են կենդանիների, առարկաների ու երևույթների անձնավորումը, ուժեղ երևակայությունն ու գույների խտացումը: Եվ դա, իհարկե, պատահական չէ: Ինչպես հայտնի է, առակները ծագել են հեքիաթներից և անհամեմատ ավելի ուշ են հանդես եկել, քան հեքիաթները:

Առակները ոչ միայն կենցաղային, այլև հասարակական-քաղաքական բովանդակություն ունեն: Շատ առակներ ուրույն ձևով արտացոլում են նաև պատմական այս կամ այն ժամանակաշրջանի հասարակական ու սոցիալական փոխհարաբերությունները: Հետևաբար, առակները որոշակի արժեք են ներկայացնում նաև տվյալ ժամանակաշրջանի, հասարակական կարգերի խոցելի կողմերի ու մարդկանց փոխհարաբերությունների ճանաչման տեսակետից: Այս առումով առակները նպաստում են ընթերցողի մեջ քննադատական վերաբերմունքի ձևավորմանը,զարգացնում են նրա երևակայությունն ու տրամաբանական մտածողությունը: Ուստի պատահական չէ, որ շատ հին ժամանակից սկսած առակները տեղ են գտել դասագրքերում, որպես երեխաներին կարդալ, պատմել,մտածել ու դատել սովորեցնելու միջոց[4]:

[4] Մ.Աբեղյան, Հայ հին գրականության պատմություն, հ. 2, Երևան, 1946, էջ 156:

Յուրաքանչյուր առակ իր մեջ որոշ այլաբանություն կամ փոխաբերություն ունի, որի բացահայտումից է կախված նրա նպատակի պարզաբանումը, նրա հիմնական մտքի ճիշտ մեկնաբանությունն ու ըմբռնումը: Ամեն մի առակ որոշակի բարոյական եզրակացություն կամ խրատ է պարունակում, որը նրա ավարտն է, նրա դաստիարակչական էության խտացումը, ուստի դրա բացահայտումից է կախված առակի դաստիարակչական ու գեղագիտական ազդեցության խորությունն ու կայունությունը: Հենց սրանք, այսինքն՝ առակի այլաբանության և բարոյախոսության բացահայտումն էլ կազմում են նրա ավանդման հիմնական առանձնահատկությունը:

Առակների գեղարվեստական կերպարների ճիշտ ընկալման վերաբերյալ երեխաների մոտեցումը նման պետք է լինի խաղի նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքին:

Այնպես, ինչպես երեխան հավատում է խաղին և չի փորձում նրա մեջ իրականն ու բնականը տեսնել, հրճվում է իր իսկ ստեղծած երևակայական, բայց միաժամանակ նաև հավանական թվացող վիճակներով ու գործողություններով, այնպես էլ պետք է հավատա առակներում եղած գործող անձանց ու վերջիններիս կատարած գործողություններին՝ առանց փորձելու դրանց մեջ իրականն ու բանականը որոնելու, առանց դրանք սառը դատողության կամ տրամաբանության քննության տակ դնելու:

Այսպիսով, առակներն անցնելիս ուսուցչի հիմնական ուշադրությունը պետք է կենտրոնացված լինի առակները ճիշտ ընկալել տալու վրա, որից և կախված կլինի նաև նրանցում եղած այլաբանությունների ճիշտ ընկալումը:

Երբ աշակերտները ճիշտ ու բազմակողմանիորեն ընկալած կլինեն առակի սյուժեն, այն ժամանակ միայն կարելի է անցնել առակում եղած այլաբանության բացահայտմանը, որպեսզի առակի գեղարվեստական ազդեցությունը չթուլանա: Ինչպես Ն. Ն. Շչեպետովան է նկատում՝ <<Միայն ամփոփիչ զրույցի ժամանակ է, որ երեխաներն ուսուցչի ղեկավարությամբ կարող են պարզաբանել առակի այլաբանությունը և ցույց տալ նրա բարոյախոսական իմաստը>>[5]:

Ժամանակից շուտ առակի այլաբանության ու բարոյախոսության բացահայտումը կթուլացնի նրա գեղարվեստական ու դաստիարակչական ազդեցությունը, ինչպես Ս.Մանդինյանն էր ասում, ոչ թե բարոյական օրինակ ցույց կտա, որը բխում է առակի էությունից,այլ կվերածվի բարոյական քարոզի, որը երեխաների համար խորթ ու անընդունելի է:

[5] Н. Н. Щепетова, Методика чтения в начальной школе,М., 1950, стр. 158.

Տվյալների մշակում և վերլուծություն

Հեքիաթների ուսումնասիրությունը, այսպիսով, կարելի է անցկացնել մոտավորապես հետևյալ պլանով.

1. Նախապատրաստական զրույց:
2. Հեքիաթի առաջին ընթերցում ուսուցչի կողմից:
3. Հեքիաթի երկրորդ ընթերցում և բառերի բացատրում աշակերտների կողմից:
4. Հեքիաթի վերլուծություն՝ ըստ առանձին մասերի, բովանդակության և լեզվի:
5. Մասերի վերնագրում և պլանի կազմում:
6. Բովանդակության վերարտադրում:
7. Կերպարների բնութագրում, բարոյախրատական եզրակացության բխեցում և համապատասխան առածների, ասացվածքների ու հանելուկների ընտրություն:
8. Հեքիաթի հեքիաթային կողմի բացահայտում:
9. Ամփոփում:

Առակների ուսումնասիրության ընթացքը ևս կարելի է տանել հետևյալ պլանով.

1. Ներածական կամ նախապատրաստական զրույց:
2. Առակի ընթերցում ուսուցչի կողմից:
3. Առակի ընթերցում աշակերտների կողմից և բառերի բացատրություն:
4. Առակի վերլուծություն՝ ըստ առանձին մասերի, բովանդակության և լեզվի:
5. Մասերի վերնագրում կամ պլան կազմել:
6. Բովանդակության վերարտադրում:
7. Կերպարների բնութագրում և գլխավոր մտքի որոշում:
8. Առակի այլաբանության կամ փոխաբերական մտքի բացահայտում:
9. Ամփոփիչ զրույց[6]:

Դասի թեման՝ «Հեքիաթի տեսակներն ու ժանրային բնութագիրը»

Դասի նպատակը՝ աշակերտները

- կիմանան հեքիաթի ժանրային բնութագիրը, լեզվական առանձնահատկությունները,
- կկարողանան տարբերել հեքիաթի տեսակները,
- կըմբռնեն հեքիաթի և իրականության տարբերությունը,
- կվերհիշեն հեքիաթագիրներին և իրենց ընթերցած հեքիաթները,

[6] Н.П. Каноныкин и Н. Н. Щербакова, Методика преподавания русского языка в начальной школе,Л., 1955, стр.247

- մուլտֆիլմը դիտելով կամրապնդեն հրաշապատում հեքիաթի առանձնահատկությունները;

Դասի ընթացքը՝

- հաշվառում
- տնային առաջադրանքի ստուգում
- <u>խթանման փուլ</u>—ի՞նչ հեքիաթագիրների գիտեք, ո՞րն է ձեր սիրված հեքիաթը
- ուսուցիչը կներկայացնի հեքիաթի ժանրային բնութագիրը և տեսակները
- <u>իմաստի ընկալման փուլ--</u>աշակերտները էլեկտրոնային գրատախտակին կտեսնեն հրաշապատում, իրապատում և կենդանական հեքիաթները բնորոշող նկարներ (հեքիաթներից, մուլտֆիլմերից)



- <u>կշռադատման փուլ--</u>կդիտեն «Երիտասարդացնող խնձորները» մուլտֆիլմը (20 րոպե)՝ պատկերացում կազմելով հրաշապատում հեքիաթիների առանձնահատկությունների մասին

- ամփոփում
- տն. հանձնարարություն՝ հորինել հրաշապատում հեքիաթ

Ամփոփում

Հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին ու ամենատարածված ստեղծագործություններից են, դրանք ծագել են մարդկության մանկության շրջանում, սակայն այսօր էլ շարունակում են ստեղծվել ու հուզել ընթերցողներին իրենց անմիջականությամբ, պարզությամբ ու խոր լավատեսությամբ: Հեքիաթները լինում են երեք տեսակ՝ կենդանական, հրաշապատում և իրապատում; Հանձնարարելի են համարվում կենդանական ու իրապատում հեքիաթները միայն, իսկ հրաշապատում հեքիաթները, որպես կանոն, այդ տարիքի երեխաներին խորհուրդ չի տրվում կարդալ:

Առակն իր ժանրային առանձնահատկություններով որոշ չափով նման է ինչպես պատմվածքին, այնպես էլ հեքիաթին: Եթե պատմվածքի նման առակը ևս պյուժե, ֆաբուլա, գործող անձերի պայքար ու գաղափար ունի, ապա հեքիաթի պես նրա մեջ առկա են կենդանիների, առարկաների ու երևույթների անձնավորումը, ուժեղ երևակայությունն ու գույների խտացումը: Եվ դա, իհարկե, պատահական չէ: Ինչպես հայտնի է, առակները ծագել են հեքիաթներից և անհամեմատ ավելի ուշ են հանդես եկել, քան հեքիաթները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Ե, Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Ե., 1980թ., էջ 190;
2. Ա. Ե. Տեր-Գրիգորյան, Ընթերցանության դասը տարրական դասարաններում, Ե.,1974թ.;
3. Н. Н. Щепетова, Методика чтения в начальной школе,М., 1950, стр. 158;
4. Н.П. Каноныкин и Н. Н. Щербакова, Методика преподавания русского языка в начальной школе,Л., 1955, стр.247;
5. Е. А. Адамович,Обзяснительное чтение в начальной школе, М., 1955;
6. Մ.Աբեղյան, Հայ հին գրականության պատմություն, h. 2, Երևան, 1946, էջ 156: